

Հաճախակի օգտագործված հապավումներ

ԴՎՔ	Դրամավարկային քաղաքականություն
ԵԿՔ	Եվրոպական Կենտրոնական բանկ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ԴՊՀ (ՖՊՀ)	Դաշնային (Ֆեդերալ) պահուստային համակարգ
ՍԳԻ, ԱԱԳ	Սպառողական գների ինդեքս, Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
MoM	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ ամսվա նույն ցուցանիշը
YoY	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է բազիսային հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ տարվա նույն ցուցանիշը
QoQ	Տվյալ ինդեքսը հաշվարկվել է շղթայական հիմքով՝ որպես ցուցանիշի հիմք վերցնելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշը
WoW	Որպես ցուցանիշի հիմք վերցվում է նախորդ շաբաթը
K	Հազար, ամերիկյան գրեյաձև
B	Միլիարդ, ամերիկյան գրեյաձև
PMI	Purchasing Managers' Index. ինդեքս է, որ ստացվում է տվյալ ոլորտում ներգրավված մասնագետների շրջանում անցկացված հարցումների հիման վրա, բնութագրում է տվյալ ոլորտում պահանջարկը, գործարար պայմանները, աճի միտումները
Core (բազային)	Ցուցիչ, որը ցույց է տալիս, որ տվյալ ինդեքսը հաշվարկվել է առանց հաշվի առնելու որոշ սեզոնային մեծ տարանջատում ունեցող բաղադրիչներ

Օգտագործված աղբյուրներ

- ՀՀ տնտեսական ցուցանիշների տվյալների համար որպես աղբյուր օգտագործվել են ՀՀ Կենտրոնական Բանկի, Ազգային Վիճակագրական Ծառայության, Ֆինանսների նախարարության, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի, Համաշխարհային Բանկի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի վիճակագրական բազաները, հրապարակումները և հաշվետվությունները,
- Արտաքին հատվածի տվյալների աղբյուրների համար տրված են բոլոր անհրաժեշտ հղումները

Ռիսկերի մասին նախազգուշացում

Սույն վերլուծական հաշվետվությունը պատրաստված է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից և կարող է օգտագործվել միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկատվություն: Վերլուծական հաշվետվությունը հիմնված է ներկայումս հասանելի հանրային տեղեկատվության վրա, որը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն համարում է վստահելի: Սակայն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի երաշխիք չի կարող տալ, որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ արժեթուղթ, օպցիոն, ֆյուչերս կամ ցանկացած այլ ֆինանսական գործիք գնելու կամ վաճառելու վերաբերյալ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ոչ մի պատասխանատվություն չի կրում այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր վնասների համար, որոնք առաջացել են սույն հաշվետվության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:


Կոնտակտային տվյալներ՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ, «Դիլինգային կենտրոն»
ՀՀ, քաղաք Երևան, Պուշկինի 19
Վերլուծաբաններ՝ Թ.Սարգսյան, Ա.Մաթասյան
(010) 591 525, (010) 591 526

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


- 2017թ օգոստոս ամսին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ աճել է 2.4%-ով (YoY), իսկ հունվար-օգոստոսին 2016թ նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը կազմել է 5.5% (YoY):
- Օգոստոսին, ինչպես նաև հունվար-օգոստոս ժամանակահատվածում տնտեսական ակտիվության ցուցանիշի աճն ապահովվել է արդյունաբերության (10.9%), առևտրի (12.4%) և ծառայությունների (15.5%) ոլորտներում գրանցված աճի հաշվին (հունվար-օգոստոս-ին համապատասխանաբար 12.4%, 12.3% և 12.4% աճ, YoY):
- Գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում պահպանվում է անկումային դինամիկան. 2016թ օգոստոսի ցուցանիշի նկատմամբ 2017թ օգոստոսին անկումը ոլորտներում կազմել է համապատասխանաբար 25.0% և 5.1% (YoY), իսկ 2017թ հունվար-օգոստոս կտրվածքով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 9.4% և 8.0% համապատասխանաբար:



Գնային միջավայր


- 2017թ օգոստոսին հուլիսի նկատմամբ ՀՀ-ում գրանցվել է 0.4% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է սննդամթերքի և ոչ ակտիվային խմիչքի 1.5% գնանկմամբ: Ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.2%, իսկ ծառայությունների ոլորտում 0.6% գնաճ (MoM):

- 2017թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ գնաճը կազմել է 0.9% (YoY), այդ թվում՝ սննդամթերքի և ոչ ակոհոլային խմիչքի գներն աճել են 2.7%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ նվազել 1.8%-ով, իսկ ծառայությունների սակագները՝ աճել 0.5%-ով (YoY):
- 2017թ. հունվար-օգոստոսին 2016թ. նույն ժամանակահատվածի նկատմամբ գնաճը կազմել է 0.6% (YoY):




ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2017թ. հունվար-օգոստոս ամիսներին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 779.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.1%-ով կամ 37.5 մլրդ դրամով (պայմանավորված հարկային եկամուտների՝ 5.8% և այլ եկամուտների՝ 10.8% աճով), իսկ ծախսերը՝ շուրջ 851.3 մլրդ դրամ՝ նվազելով 2%-ով կամ մոտ 17 մլրդ դրամով:
- Տարվա առաջին ութ ամիսների տվյալներով ՀՀ պետական բյուջեի եկամուտների 93.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 4.6%-ը՝ այլ եկամուտների, 1.6%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին:
- Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2017թ. հունվար-օգոստոսին աճ է արձանագրվել բոլոր հարկատեսակների գծով՝ բացառությամբ շահութահարկի (-15.4%), իսկ պետական տուրքի գծով նույն ժամանակահատվածում գրանցվել է մոտ 0.8% նվազում: Նշենք, որ հարկային եկամուտներն ու տուրքերը 2017թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում կազմել են մոտ 736.4 մլրդ ՀՀ դրամ՝ 2016թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 5.8%-ով:



- Հունվար-օգոստոս ամիսներին հարկային եկամուտների և պետական տուրքերի 32.6%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի, 6%-ն ակցիզային հարկի, 10.2%-ը շահութահարկի, 28.1%-ը եկամտային հարկից ստացված մուտքերի և 5.9%-ը՝ մաքսատուրքերի հաշվին:
- Նախորդ տարվա հունվար-օգոստոս ժամանակահատվածի 106.05 մլրդ դրամ դեֆիցիտից արդեն 2017թ. նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը կրճատվել է մինչև 71.65 մլրդ դրամ: Նշենք, որ միայն օգոստոս ամսին բյուջեի եկամուտները կազմել են մոտ 99.44 մլրդ դրամ, իսկ ծախսերը 104.7 մլրդ դրամ, ինչի արդյունքում գրանցվել է բյուջեի՝ մոտ 5.3 մլրդ ՀՀ դրամ դեֆիցիտ:
- 2017թ. օգոստոսին ՀՀ արտաքին պետական պարտքն արդեն հատել է 5 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը՝ ամսվա վերջի դրությամբ կազմելով մոտ 5.02մլրդ ԱՄՆ դոլար:
- Համախառն պետական պարտքն օգոստոսին հասել է մոտ 6.26 մլրդ ԱՄՆ դոլարի՝ ամսական կտրվածքով աճելով մոտ 0.93%-ով, տարեկան կտրվածքով՝ մոտ 14.12%-ով, իսկ տարվա սկզբից՝ մոտ 4.84%-ով:
- Նշենք, որ շարունակում է աճել Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը՝ արդեն օգոստոսի վերջի դրությամբ հասնելով 58.9%-ի (2017թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ համախառն պետական պարտքի մեծությունը՝ 2016թ. ՀՆԱ նկատմամբ):




ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

- 2017թ օգոստոսին ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալները նախորդ ամսվա նկատմամբ աճել են 0.15%-ով (MoM)՝ 2,506մլրդ դրամից հասնելով 2,510մլրդ դրամի: Այդ թվում՝ ռեզիդենտներին տրամադրված դրամային վարկերն (854.9մլրդ դրամ) ավելացել են 1.6%-ով, արտարժույթով վարկերը (1,413.2մլրդ դրամ)՝ 0.6%-ով (MoM), իսկ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները (242.3մլրդ դրամ)՝ կրճատվել՝ 1.6%-ով և 11%-ով համապատասխանաբար դրամային (105.7մլրդ դրամ) և արտարժույթային վարկերի (136.5մլրդ դրամ) պարագայում:
- Նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշի նկատմամբ վարկավորման ծավալների աճը երկրում կազմել է 13.5% (YoY): Ռեզիդենտների վարկավորումն աճել է 10.3%-ով (YoY), այդ թվում՝ դրամով՝ 24%, արտարժույթով՝ 3.4% աճ (YoY): Ոչ ռեզիդենտներին տրամադրված

վարկերի ծավալներն ավելացել են շուրջ 55%-ով՝ դրամային վարկերի ծավալներն աճելով 68.5%-ով, իսկ արտարժութայինը՝ 46%-ով (YoY):



- Նույն ամսում ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները նախորդ ամսվա նկատմամբ ավելացել են մոտ 0.2%-ով՝ կազմելով 2,533.8 մլրդ դրամ: Այդ թվում՝ դրամային ավանդների աճը կազմել է 1.6%, իսկ արտարժութային ավանդներինը՝ 1.8% (MoM): Ներգրավված ավանդների ծավալը նախորդ տարվա օգոստոս ամսվա ցուցանիշի նկատմամբ ավելացել է 21.1%-ով (YoY), այդ թվում՝ դրամային ավանդներինը՝ 34.2%, իսկ արտարժութային ավանդներինը՝ 9.2% (YoY):
- Հուլիսի նկատմամբ օգոստոսին մինչև մեկ տարի ժամկետայնությամբ դրամային վարկերի միջին տոկոսադրույքն աճել է՝ 13.6%-ից հասնելով 14.01%-ի, իսկ երկարաժամկետ վարկերինը՝ 15.3%-ից 15.5%: Արտարժութային կարճաժամկետ վարկերի միջին տոկոսադրույքն աճել է 7.1%-ից մինչև 7.9%, մինչդեռ երկարաժամկետ վարկերի տոկոսադրույքը՝ 9.7%-ից նվազել է մինչև 9.5%:
- Հուլիս-օգոստոս ժամանակահատվածում կարճաժամկետ դրամային ավանդների տոկոսադրույքներն աճել են 8.8%-ից մինչև 9.4%, իսկ երկարաժամկետ ավանդներինը նվազել են 11.1%-ից մինչև 11.0%: Արտարժութային կարճաժամկետ ավանդների միջին տոկոսադրույքը հուլիսյան 3.7% մակարդակից օգոստոսին աճել է մինչև 3.9%, իսկ երկարաժամկետը՝ 5.19%-ից նվազել մինչև 5.13%:
- Արդյունքում վարկերի միջին տոկոսադրույքը երկրում հուլիսյան 11.4%-ից օգոստոսին բարձրացավ մինչև 11.7%, իսկ ավանդներինը՝ 7.2%-ից մինչև 7.3%:



ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Արտաքին առևտուր


- 2017թ. հունվար-օգոստոս ժամանակահատվածում ՀՀ արտահանման ծավալները կազմել են 667.8 մլրդ դրամ (1,383.2 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներմուծման ծավալները՝ 1,206 մլրդ դրամ (2,497.4 մլն ԱՄՆ դոլար): Արդյունքում, ՀՀ առևտրային հաշվեկշիռը տարվա առաջին 8 ամիսների ընթացքում դեֆիցիտային էր՝ -538.2 մլրդ դրամ (-1,114.2 մլն ԱՄՆ դոլար):
- Միայն օգոստոսին ներմուծման ծավալները մոտ 137.6 մլն դոլարով գերազանցել են արտահանման ծավալները՝ կազմելով 335.7 մլն դոլար: Ընդ որում՝ օգոստոսին նախորդ տարվա օգոստոս ամսվա համեմատ աճ են գրանցել և՛ ներմուծման (+21.8%) և՛ արտահանման (+12.2%) ծավալները:
- ՀՀ արտաքին առևտրի առավելագույն մասը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը (2017թ. հունվար-օգոստոսին՝ 25.6%):
- Դեպի ՌԴ արտահանման ծավալները տարվա առաջին 8 ամիսներին տարեկան կտրվածքով ավելացել են մոտ 36.6%-ով, իսկ ներմուծման ծավալները՝ 22.8%-ով:



Դրամական հոսքեր

- Դոլարային արտահայտությամբ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տվյալներից ելնելով՝ զուտ ներհոսքն 2017թ.

օգոստոսին տարեկան կտրվածքով ավելացել է 13.21%-ով, իսկ ամսական կտրվածքով՝ մոտ 8.24%-ով (կազմել է մոտ 97.6 մլն ԱՄՆ դոլար):



ՀՀ վճարային հաշվեկշռի ցուցանիշներ, 2017թ I կիսամյակ / ՀՀ ԱՎԾ


մլն ԱՄՆ դոլար	2017թ I եռ.	2017թ I եռ. - 2016թ I եռ. (%) աճ	2017թ II եռ.	2017թ II եռ. - 2016թ II եռ. (%) աճ	2017թ I կիս.	2017թ I կիս. - 2016թ I կիս. (%) աճ
Ընթացիկ հաշիվ	-110.6	-4.5	20.8	-149.5	-89.7	-43.2¹
Ապրանքներ և ծառայություններ	-224.4	34.4	-312.7	54.7	-537.1	45.5
Սկզբնական եկամուտներ	-15.9	-74.9	136.6	344.5	120.7	-470.0
Երկրորդային եկամուտներ	129.7	13.4	197.01	52.4	326.7	34.1
Այդ թվում՝ անձնական տրանսֆերտներ	98.9	21.0	103.4	6.3	202.3	13.0
Կապիտալի հաշիվ (կապիտալ տրանսֆերտներ)	10.93	48.7	10.13	30.0	21.06	2.5
Ֆինանսական հաշիվ Որի կազմում՝	77.97	-140.2	-123.17	71.9	-45.2	-82.9
Ուղղակի ներդրումներ	-67.2	131.1	-27.5	-39.3	-94.8	27.2
Պորտֆելային ներդրումներ	48.2	-998.2	-5.8	-84.6	42.3	-197.5

¹ - Բացասական սալդոյի աճ - Բացասական սալդոյի նվազում

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

- Սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում ԱՄՆ դոլարի ինդեքսը գրանցեց ավելի քան 0.87% անկում՝ պայմանավորված մի շարք բացասական քաղաքական և տնտեսական գործոններով:



Մի կողմից ԱՄՆ - Հա. Կորեա քաղաքական լարվածությունը, մյուս կողմից ԱՄՆ պետական պարտքի սահմանաչափի խնդիրը և որոշ մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումն ամսվա սկզբից ճնշող ազդեցություն ունեցան ամերիկյան արժույթի վրա:

- Արդեն սեպտեմբերի 6-ին, սակայն, դոլարի անկումը որոշ չափով զսպվեց, երբ ԱՄՆ Կոնգրեսի կողմից հաստատվեց պետական պարտքի սահմանաչափի ժամկետը մինչև 2017թ. դեկտեմբեր հետաձգելու որոշումը:


- Սեպտեմբերի 20-ին կայացած նիստում ԱՄՆ

ԴՊՀ-ն ԴՎՔ բազային տոկոսադրույքը թողեց անփոփոխ՝ 1-1.25% միջակայքում, սակայն նշեց հոկտեմբերից ԴՊՀ 4.5 տրլն ԱՄՆ դոլարի հասնող հաշվեկշռի կրճատումների գործընթացը սկսելու իր նպատակադրվածության մասին:

- Որպես ԱՄՆ տնտեսական դրության մեջ իրենց վստահությունը հաստատող գործոն՝ կոմիտեի անդամները բարձրացրին ընթացիկ տարվա համար երկրի տնտեսական աճի իրենց կանխատեսումները՝ նախկինում գնահատված 2.2%-ից հասցնելով 2.4%-ի: Միևնույն ժամանակ, սակայն, ինֆլյացիայի նվազող միտումների առկայության պայմաններում՝ 2017թ. համար դեռևս հունիսին կանխատեսվող 1.7% գնաճի կանխատեսումը նվազեցվեց մինչև 1.5% մակարդակը:


- ԴՊՀ նիստի արձանագրությունը մատնանշեց միջնաժամկետում վերջերս տեղի ունեցած փոթորիկների միայն աննշան հնարավոր ազդեցությունն ԱՄՆ տնտեսական զարգացումների վրա:

- ԴՊՀ դրական արձանագրության և դեկտեմբերյան նիստում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման սպասումների աճի ֆոնին ԱՄՆ դոլարի փոխարժեքի անկումն այլ հիմնական արժույթների նկատմամբ փոխարինվեց աճով,




ինչը պահպանվեց մինչ ամսվա վերջ (սեպտեմբերի 8-30 ժամանակահատվածում դոլարի ինդեքսի աճը կազմեց մոտ 3%):

- Հիմնականում պայմանավորված ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացմամբ՝ EUR/USD զույգը սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթը 1.1900-ից ցածր արժեքներում բացելուց հետո մինչ սեպտեմբերի 8-ը գրանցեց մոտ 2% աճ: Աճին նպաստեցին նաև ԵՄ դրական մակրոտնտեսական ցուցանիշների հրապարակումն ու ԵԿԲ կողմից քանակական մեղմացման շրջանակներում ակտիվների ամսական գնումների ծավալները կրճատելու սպասումները:
- Սեպտեմբերի 7-ին Eurostat-ի կողմից հրապարակված տվյալների համաձայն ԵՄ ՀՆԱ տարեկան աճը տարվա երկրորդ քառորդում կազմել է 2.3%, ինչը գերազանցում է նախնական տվյալները և հանդիսանում է 2011թ. առաջին եռամսյակից հետո գրանցված առավելագույն աճը: ԵԿԲ-ն բարձրացրել է 2017թ. ԵՄ ՀՆԱ աճի կանխատեսումները. այժմ կանխատեսվում է 2.2% ՀՆԱ տարեկան աճ (2007թ-ից հետո առավելագույն աճ):
- EUR/USD փոխարժեքի աճողական դինամիկան փոխարինվեց նվազմամբ ԵԿԲ սեպտեմբերյան նիստից հետո, երբ քանակական մեղմացման ծրագրի շրջանակներում ակտիվների գնումների ծավալները կրճատելու վերաբերյալ քննարկումները հետաձգվեցին մինչև հոկտեմբեր ամիսը (ներկայումս ամսական գնումների ծավալները կազմում են 60 մլրդ եվրո):
- ԵԿԲ նախագահ Մ.Դրագին իր ելույթում նշեց, որ քանակական մեղմացման վերաբերյալ որոշում կկայացվի հավանաբար հոկտեմբերին, սակայն ԵԿԲ-ն չի կարող իրեն թույլ տալ հապճեպ գործողություններ իրականացնել՝ չխոչընդոտելու համար տնտեսության վերականգնմանը: Դրագին մտահոգություն է հայտնել միասնական արժույթի փոխարժեքի տատանողականության վերաբերյալ, որը տնտեսության համար անորոշությունների աղբյուր է հանդիսանում: Ուստի ԵԿԲ-ին որոշակի ժամանակ է անհրաժեշտ մոնիթորինգ իրականացնելու համար:
- Դրամավարկային քաղաքականության վերաբերյալ ԵԿԲ որոշման համաձայն բազային տոկոսադրույքները պահպանվեցին նախկին մակարդակներում՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 0.0%, ավանդադրման տոկոսադրույքը՝ -0.4%:
- Սեպտեմբերի 8-ից մինչ ամսվա վերջ EUR/USD զույգը գրանցեց մոտ 3% անկում՝ հասնելով 1.1720-ից ցածր արժեքների, ինչի արդյունքում փոխարժեքի ամսական անկումը կազմեց մոտ 0.81% (նշենք, որ 6 ամիս անընդմեջ աճից հետո սա EUR/USD փոխարժեքի առաջին ամսական անկում էր. մինչ այդ ամբողջ տարվա ընթացքում անկում էր գրանցվել միայն փետրվարին՝ -2.05%):
- Ի տարբերություն եվրոյի՝ բրիտանական ֆունտն ԱՄՆ դոլարի նկատմամբ սեպտեմբեր ամսվա ընթացքում գրանցեց մոտ 3.6% աճ՝ պայմանավորված ամսվա ընթացքում Մեծ



Բրիտանիայի տնտեսության տարբեր ոլորտներում դրական տեղաշարժերի մասին վկայող ցուցանիշների հրապարակմամբ և Անգլիայի Բանկի կողմից դրամավարկային քաղաքականության առավելապես խստացմանն ուղղված դիրքորոշմամբ:

- Սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ Անգլիայի Բանկի հերթական նիստը, որում որոշում կայացվեց ԴՎԲ բազային տոկոսադրույքն ու ակտիվների գնումների ծավալը թողնել անփոփոխ՝ համապատասխանաբար 0.25% և 435 մլրդ ֆունտ ստեռլինգ մակարդակներում: Միևնույն ժամանակ, սակայն, նշվել է, որ ներկայիս ակտիվացող գնաճի (2.9% YoY օգոստոսին), տնտեսության չօգտագործվող հզորությունների և գործազրկության կրճատման (4.3% հուլիսին, վերջին 4 տասնամյակների նվազագույն ցուցանիշ) պայմաններում մոտ ամիսներին ԴՎԲ խթանող միջոցառումներ կրճատումը կլինի նպատակահարմար:
- Ռուսաստանյան արժույթը վերջին ամսում առավելապես անտեսել է նավթի շուկայում գրանցվող գնաճն ամսվա կտրվածքով ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվելով ընդամենը 0.89%-ով (նույն ժամանակահատվածում Brent տեսակի նավթի գինն աճել է ավելի քան 9.85%-ով):
- Որպես ռուբլու փոխարժեքի վրա ճնշող գործոն կարելի է առանձնացնել այն հանգամանքը, որ ՌԴ ԿԲ տվյալներով 2017թ հունիս-օգոստոս ամիսներին ռուսաստանյան տնտեսությունը ծախսել է 6.2 մլրդ ԱՄՆ դոլարով ավելի քան արտարժույթի ներհոսքն էր՝ հումքային արտահանման ծավալների սեզոնային կրճատման, ներմուծման պահանջարկի աճի, ինչպես նաև ռուսական ընկերությունների բաժնետոմսերում օտարերկրյա ներդրողների կողմից դիվիդենդների՝ երկրից դուրսբերման հետևանքով: Սեպտեմբեր ամսին իրադրությունը սրեց նաև արտաքին պարտքի գծով վճարումների ակտիվ շրջանը. խոշորագույն ընկերությունների կողմից մարվեց շուրջ 7.9 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող արտաքին պարտք (ՌԴ արտաքին պետական պարտքի մարումների հաջորդ ակտիվ շրջանն ակնկալվում է դեկտեմբերին):
- Սեպտեմբերի 15-ի նիստում ՌԴ ԿԲ-ն ԴՎԲ բազային տոկոսադրույքը նվազեցրեց 0.5 կետով՝ մինչև 8.5% մակարդակը:
- Արդեն դեկտեմբեր ամսին ԱՄՆ ԴՊՀ կողմից բազային տոկոսադրույքի բարձրացման սպասումների աճի, նավթի գների նվազման հավանականության և ՌԴ նկատմամբ նոր պատժամիջոցների սահմանման հնարավորության պայմաններում ռուսական ռուբլու փոխարժեքի նվազման ռիսկերն աճում են: ԱՄՆ ԴՊՀ կողմից տոկոսադրույքների բարձրացումը պատճառ է հանդիսանում շահույթի ֆիքսացիայի համար. ԱՄՆ խոշորագույն ներդրումային ֆոնդերից iShares JP Morgan USD Emerging Markets Bond ETF ֆոնդը, որը երկու տարի շարունակ ներդրումներ է կատարել ռուսական պետական պարտատոմսերում, ներկայումս ֆիքսում է հաճախորդների միջոցների՝ վերջին երեք տարիներին գրանցված



առավելագույն արտահոսքը: Սեպտեմբեր ամսին զարգացող երկրների պարտատոմսերում ներդրումներ կատարող այս ֆոնդից դուրս է բերվել շուրջ 221.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ հուլիս ամսվանից՝ 1.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ հանգեցնելով ոչ միայն ռուսական, այլ նաև մյուս զարգացող երկրների արժույթների արժեզրկմանը:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Նավթի շուկա

- Սեպտեմբեր ամսին նավթի համաշխարհային շուկայում դիտվել է գների աճի հստակ արտահայտված դինամիկա: Ամսվա սկզբից աճի նպաստող հիմնական գործոնն ԱՄՆ տարածքում մոլեգնող փոթորիկներն էին, որոնց հետևանքով իրենց գործունեությունը դադարեցրին Մեքսիկական ծոցում և Տեխասում գործող որոշ հանքավայրեր և վերամշակման գործարաններ՝ պաշարների մեծ կուտակումներից խուսափելու նպատակով: Արդյունքում կրճատվեց նավթամթերքի առաջարկը:
- Սեպտեմբերի 12-ին ՕՊԵԿ-ի հերթական հաշվետվության հրապարակումն իր հերթին խթանեց նավթի գների աճը: Վերջինիս մեջ նշվում է նախորդ ամսում ՕՊԵԿ-ի նավթի արդյունահանման օրական ծավալների 79 հզ բարելով կրճատման մասին՝ մինչև 32.76 մլն բարել մակարդակը: Նշենք, սակայն, որ Լիբիայի և Նիգերիայի կողմից նավթի արդյունահանման ծավալներն ավելացվում են, իսկ ԱՄՆ-ում վերջիններս անընդմեջ աճելով հասել են 9.54 մլն բարելի: Տարվա երկրորդ կեսին ՕՊԵԿ-ը կանխատեսում է նավթի համաշխարհային պահանջարկի 1.35 մլն բարելով աճ մինչև 98.12 մլն բարել օրական ծավալը: Կանխատեսված ցուցանիշը 70 հզ բարելով գերազանցում է նախորդ հաշվետվության ներկայացրած կանխատեսումներին:
- Ամսվա վերջին Բրենթ նավթի բարելի գինը հատեց ռեկորդային 58 ԱՄՆ դոլարի սահմանը՝ խթանվելով Իրաքյան Քուրդիստանում անցկացված անկախության հանրաքվեի արդյունքներին Բաղդադի և հարևան երկրների կոշտ արձագանքից: Իրաքյան Քուրդիստանի տարածքում է գտնվում Իրաքի նավթային պաշարների շուրջ 20%-ը, իսկ արտահանումը կատարվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղով, որով այն հասնում է Թուրքիայի նավահանգիստներ: Իսկ վերջինս կտրուկ դեմ է արտահայտվում Քուրդիստանի



անկախությանը: Վերջինիս անկախացման պարագայում Թուրքիայի կողմից նավթամուղի աշխատանքի արգելափակման ռիսկ է առաջանում:

- Սեպտեմբեր ամսվա ընթացքում Բրենթ տեսակի նավթի բարելի գնի աճը կազմել է 7.4%՝ 52.7 ԱՄՆ դոլարից հասնելով 56.6-ի

Ոսկու շուկա

- Հուլիս ամսվա սկզբից անընդմեջ աճ գրանցելուց հետո ոսկու շուկայում գները սեպտեմբերի սկզբից պահպանում են կայուն անկումային դինամիկա: Մինչ այդ գրանցվող աճը պայմանավորված էր Հյուսիսային Կորեայի հետ կապված գեոքաղաքական լարվածությամբ և ԱՄՆ ԴՊՀ կողմից ընթացիկ տարում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման սպասումների նվազմամբ:
- Սեպտեմբերի սկզբից գեոքաղաքական լարվածությանը շուկայի մասնակիցների արձագանքի մեղմացումն ու ԱՄՆ տնտեսական ցուցանիշների բարելավման պայմաններում ԴՊՀ ներկայացուցիչների կողմից դեկտեմբերյան նիստում ԴՎՔ բազային տոկոսադրույքի բարձրացման օգտին հնչեցվող ելույթները հիմք հանդիսացան ոսկու գների նվազող դինամիկայի հաստատման համար:
- ԱՄՆ տնտեսական ցուցանիշների բարելավման և նախագահ Դ.Թրամփի կողմից առաջարկվող հարկային նոր պլանի հաստատման սպասումների ֆոնին ԱՄՆ դոլարի դիրքերի անընդմեջ բարելավումն իր հերթին զսպող ազդեցություն գործեց ոսկու գների վրա:
- Սեպտեմբեր ամսվա ընթացքում ոսկու ունցիայի գինը նվազեց մոտ 6%-ով՝ 1,348.88 ԱՄՆ դոլարից հասնելով 1,270.52 ԱՄՆ դոլարի:



ՖՈՆԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Հիմնական ֆոնդային ինդեքսների շարժ. 01-30 սեպտեմբերի, 2017թ.

Ինդեքս	Արժեք 30.09.17թ դր.	Փոփոխություն (կետ)	Փոփոխություն (%)
ԱՄՆ			
Dow 30	22,405.09	456.99	2.08
S&P 500	2,519.36	47.71	1.93
Nasdaq Composite	6,495.96	67.30	1.05
Եվրոպա			
Euro Stoxx 50	3,594.85	173.38	4.82
Europe Stoxx 600	388.16	14.28	3.82
AEX	537.06	21.02	4.07
FTSE 100	7,372.76	-57.86	-0.78
ՌԴ			
MICEX (MMB5)	2,022.22	2,077.19	54.97
IRTS (PTC)	1,095.84	1,136.75	40.91